«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/1254

«13» 09 2024թ.

«Աննարկա» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ Լ.Փնջոյանին

Հարգելի գործընկեր,

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ նաև՝ Համալսարան/ կողմից հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2024/8-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Աննարկա» ՍՊ ընկերությունը /այսուհետ նաև՝ Ընկերություն/, ինչի արդյունքում 2024 թվականի հուլիսի 31-ին Համալսարանի և «Աննարկա» ՍՊ ընկերության միջև կնքվել է համակարգչային սարքերի և պարագաների գնման թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/8-5-ԵՊԲՀ-7» պայմանագիր:

ՀՀ ֆինանսների նախարարության թիվ 03/26-1/17361-2024 և 03/26/18660-2024 գրություններով Համալսարանը ծանուցվել է մասնավորապես, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին (ներառված է 06.05.2023թ.-ից մինչև 20.06.2025թ.-ը) գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված են «Էսզեթ Ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ները և եթե 06.05.2023թ.-ից սկսած «Աննարկա» ՍՊԸ-ն մասնակցել է գնման գործընթացներին, ապա այդ ընթացակարգերի մասով պետք է ձեռնարկվեն միջոցներ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ուղղությամբ, իսկ եթե գնման գործընթացների մասնակցության արդյունքում նշված ընկերության հետ կնքվել են պայմանագրեր, ապա այդ պայմանագրերը պետք է լուծվեն:

Նախարարությունը հայտնել է նաև, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննարկման արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի

կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Սույն կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը.

Բացի այդ, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝

Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 121-րդ կետի համաձայն՝

Մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Տվյալ դեպքում «Աննարկա» ՍՊ ընկերությունը մասնակցության հայտ ներկայացնելով ԷԱՃԱՊՁԲ-2024/8-5-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգին, ներկայացրել է հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, որով հայտնել և հավաստել է, որ ընկերությունը և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, դրանով իսկ ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ):

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված հիմքերը և առաջնորդվելով կնքված Պայմանագրի 8.3-րդ կետով՝ [illegible] դրը օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նպատակով

հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:», «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը միակողմանի լուծում է 31.07.2024թ. «Աննարկա» ՍՊ ընկերության հետ կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2024/8-5-ԵՊԲՀ-7» պայմանագիրը, ընդ որում Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Վաճառողի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու հաջորդող օրվանից:

Կից՝ ՀՀ ֆիՀՀ ֆինանսների նախարարության թիվ 03/26-1/17361-2024 և 03/26/18660-2024 գրությունների պատճենները:

Առդիր՝ 5 թերթ:

ՌԵԿՏՈՐ Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆիննախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 011

№ 03/26-1/17361-2024

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հարգելի գործընկերներ

Հայտնում ենք, որ ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը 05/04/2024թ. թիվ Ե/801-24 և 06/08/2024թ. թիվ Ե/1828-24 գրություններով (կցվում են) ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել տեղեկատվություն համաձայն որի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին (ներառված է 06/05/2023թ. մինչև 20/06/2025թ.) գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված են «Էսզեթ ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ները:

Այս կապացությամբ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի՝

- 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու

ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

- 32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերության համաձայն մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին.

- 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Նշված կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են

իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը:

Վերոգրյալի ամփոփմամբ գտնում ենք, որ եթե 06/05/2023թ. սկսած «Էսզեթ ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ները մասնակցել են գնման գործընթացներին, ապա այդ ընթացակարգերի մասով պետք է ձեռնարկվի միջոցներ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ուղղությամբ, իսկ եթե գնման գործընթացների մասնակցության արդյունքում կնքվել են պայմանագրեր, ապա այդ պայմանագրերը պետք է լուծվեն:

Միաժամանակ՝

- խնդրում ենք սույն գրության պատճենը տրամադրել պատվիրատուի համակարգում գործող ՓԲԸ-ներին, ՊՈԱԿ-ներին և հիմնադրամներին.
- ՀՀ մարզպետարաններին՝ խնդրում ենք սույն գրության պատճենը տրամադրել նաև մարզի վարչական սահմաններում գտնվող համայնքներին և վերջիններիս համակարգում գործող ՓԲԸ-ներին, ՀՈԱԿ-ներին և հիմնադրամներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

8/14/2024

X

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN AVAG 2003930574

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Կատարող՝ Գ. Մեհրաբյան
Հեռ. 011800147

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆիննախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 011

№ 03/26/18660-2024

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ
ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ
ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մուրադյան

Ի պատասխան Ձեր 26/08/2024թ թիվ 09/1149 գրության հայտնում ենք հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով

փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Սույն կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը.

Հաշվի առնելով վերոնշյալ կարգավորումը՝ գտնում ենք, որ գրությամբ ներկայացված դեպքում մատակարարի կողմից մատակարարված ապրանքների դիմաց վճարումներ չպետք է կատարվեն:

Միաժամանակ կից ներկայացնում ենք ՀՀ պետական վերահսկողական ծառայության Ե/801-24 և Ե/1828-24 գրությունները և ՀՀ ֆինանսների նախարարության թիվ 03/26-1/17361-2024 գրությունը:

Առդիր՝ 4 ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

9/4/2024

X

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN AVAG 2003930574

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Կատարող՝ Գ. Հակոբյան
Հեռ. 011800331